

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակիի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«НОВОСТИ» լրագրի յօդուածը թիւրքաց չայաստանի մասին: Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ թիւրքացից: Նամակ թիւրքացից: Արտաքին լուրեր: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

НОВОСТИ ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒՄԵՆ ԹԻՒՐԻՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Անգլիական համայնքները ժողովում երեկ տար վիճարանութիւններ էին կատարում հայոց խնդրի վերաբերութեամբ: Այդ նոր միջազգային խնդիրը, որ արծարծեց անգլիական մամուլը, դարձրեց, վերջապէս, իր վրա անգլիական հասարակութեան ուշադրութիւնը և հազիւ թէ չուտով մոռացութեան կը արվի, նայելով այն վիճարանութիւններին, որ կատարվեցան այս օրերս համայնքները ժողովում:

Վերադարձնաւ իր անգլիական համայնքները, ներքին թիւրքացից Ներքին լուրեր, ըստ երեւոյթին, դործել ոչ պակաս եռանդով և նրա այլ ներքին խնդիրներում որոնց իրագործելը իր հիմքերի մէջ խախտված ժամանակն կայսրութիւնը անկարող է յայտնվում: Նոյն ինքն լուրը Գիւնթերին, որը այնքան ցաւ պատճառեց սուլթանին Ներքին ափերի վրա իր արած վերանորոգութիւններով և կարգադրութիւններով, նորերում տեսնելով ժամանակ յիշեցրեց նրան, որ Բերլինի դաշնագրի վճիռը Հայաստանում ընթերցման մասնակցութեամբ անկատար է մնացել: Սուլթանը, ճարտար կարած, ստիպված էր մեծ վիզիւրից և մի քանի միւս արտաքին յանձնարարով չը շանակել և յանձնել նրան մշակելու վերանորոգութիւնների նախագիծը կայսրութեան բոլոր նահանգներին համար: Բայց ինչպէս երևում է, վիզեան միւստրութիւնը Անգլիայում շատ հաւատ չէ ընծայում սուլթանի հաշակաւոր խոստումներին, որոնց վրա, իր ժամանակ, այնպէս հանդիսաւոր կերպով մատնացրեց էին անուամբ Բիւսոնֆիլդի միւստրութեան տօրները: Ապացոյց այդ բաներին երեկվան վիճարանութիւնները համայնքների ժողովում:

Այդ վիճարանութիւնները սկսվեցան պարսի առաջարկութեամբ, որը հրաւիրում էր համայնքների ժողովին յոյս յայտնել, որ անգլիական կառավարութիւնը, Բերլինի դաշնագրի ստորագրող միւս պետութիւնների հետ միասին, չի դադարի յիշեցնել Բ. Գրանը վերանորոգութիւններ մտցնելու համար: Վերջինս, իր անգլիական համայնքները և Եւրոպական թիւրքացիում, վերանորոգութիւններ, որոնց վերաբերութեամբ թիւրքացի պարտաւորութիւններ յանձն առաւ Բերլինի կոնգրեսում: Այդ պարտաւորութիւնները, որպէս յայտնի է, բոլորում են թիւրքացի համար ուղղակի Բերլինի դաշնագրի 23-դ յօդուածից, որի մէջ Հայաստանի անունը թէպէտ և չէ յիշված, (պաշտօնական թիւրքաց լեզուում Հայաստանը դրութիւն չունի, այլ կայ միայն հայերով բնակեցրած տեղ), բայց Կրիտ հղում հետ միասին, զրաւանակաւ խօսվում

է այն վերանորոգութիւնների մասին, որոնք պէտք է մտցնվեն «Իւրաքանչիւր նահանգում»: Նոյն այդ դաշնագրի զօրութեամբ, Անգլիան, որի կառավարութիւնների հետ հաւաստարակէս, իրաւունք ունի յիշեցնել Բ. Գրանը որ նա իր յանձն առած այս կամ այն պարտաւորութիւնները չէ կատարում: Բայց Անգլիայի իրաւունքը այդպիսի առաջարկութիւններ անելու աւելանում է կրկին այն հանգամանքով, որ նա, Բերլինի դաշնագրից յետոյ առանձին դաշն կապեց թիւրքացի հետ, որի հիման վրա Բ. Գրանը յանձն առաւ կրկին նոր պարտաւորութիւններ իր կառավարութեամբ դործելի դրութիւնը բարեփոխելու վերաբերութեամբ: Այդպիսով, անգլիական կառավարութիւնը կրկնակի իրաւունք ունի միջամտելու թիւրքաց ներքին վարչութեան մէջ, որի մասին և յիշեցնում են նրան այժմ ժողովրդական ներկայացուցիչները:

Բայց այդ յիշատակումն, իսկապէս, անհրաժեշտ չէր, այդ բանը միայն միջազգային հարց վարձեցրեց պարլամենտական վիճարանութիւնների ասպարէզի վրա և զրանով նրան աւելի ոյժ և կենդանութիւն տուեց: Միւստրութիւնը ստիպված էր այժմ յայտնաբեր խոստովանել Հայաստանի անբաւարար դրութիւնը, բայց նա (միւստրութիւնը) մի և նոյն ժամանակ, յայտարարեց, որ ինքն եռանդով քայլեր է արել յօդուած Գրան-Ասիայի հայ ազգաբնակչութեան համար անտանկի դարձած դործերի կարգի փոփոխման: Կառավարութեան կողմից խօսող միւստր Գրանօրի մատնացրեց արաւ այն բանի վրա, որ լուրը Գիւնթերին յանձնարարված էր ամենահաշակաւոր և լուրջ կերպով յիշեցնել Բ. Գրանը նրա յանձն առած պարտաւորութիւնների մասին, որ «անգլիական դեսպանին Կ. Պոլսում հրամանագրված էր ձեռքից չը թողնել ոչ մի դէպք Բ. Գրան ուշադրութիւնը դարձնելու համար այն մեծ նշանակութեան վրա, որ տալիս է Անգլիան Բերլինի դաշնագրի 23-դ յօդուածից բոլոր պարտաւորութիւններին»: Պարզ է, որ Գրանստանի միւստրութիւնը նազ չէր անում այդ հարցի վերաբերութեամբ Բ. Գրան հետ ունեցած դիպլոմատիական բանակցութիւնների ժամանակ: Պարլամենտական հարցմունքը և պ. Բրայսի առաջարկութիւնը նրան միայն հնարաւորութիւն տուին աւելի բարձրաձայն յայտնելու իր միտքը նոյն այդ գործի վերաբերութեամբ և, այդպիսով, դարձնելու նրա վրա ընդհանուր ուշադրութիւնը ոչ միայն Անգլիայում, բայց և մնացեալ Եւրոպայում: Պ. Գրանօրի ձառն վերջին խօսքերը մինչև անգամ մի փոքր սպառնալի էին սուլթանի համար: «Ներկայ ըստին ծանր և հանդիսաւոր բոլոր և Օսմանեան կայսրութեան պատմութեան մէջ: Պէտք է յուսաւ, որ թիւրքաց միապետի պարտաւորութիւնն ան զգացմունքը նրան ընդունակ կը դարձնի ըմբռնելու եւրոպական դադափարները և եւրոպական կուլտուրան»:

Եւ այդպէս, եւրոպական դադափարները և եւրոպական կուլտուրան քարոզվում են

անգլիական առեւտրի բարձրութիւնից, որպէս կարգ հաստատելու միակ միջոց քարոքանք եղող կայսրութեան մէջ: Միայն այդ դադափարները և այդ կուլտուրան, պ. Գրանօրի կարծիքով, կարող են կենսաւորել Օսմանեան կայսրութեան թուլացած մարմինը: Այդ կողմից անգլիական կառավարութեան մարքերի հետ կատարել լապէս համաձայն է և հոշակաւոր թրքացի ունեւարացի վամբերի, որը սպեց «Պեշտեան Լայդի» մէջ մի յօդուած Հայաստանի դրութեան մասին: Նա չէ հերքում, որ գործերի դրութիւնը այդ երկրում անտանկի է, բայց յուսադրվում է, որ ամեն բան կարող է զբաղվել եւրոպական ոգով մտցրած վերանորոգութիւններով, և այդ ոգին, ինչպէս նա հաւատացնում է, աւելի և աւելի արմատներ է բռնում «հայ ինտելիգենցիայի» մէջ:

Համայնքների ժողովը, թէպէտ և բաց թողնելով «Բերլինի դաշնագրի ստորագրող պետութիւնների հետ միասին» խօսքերը, ընդունեց պ. Բրայսի առաջարկութիւնը, որին չը հակառակեց Գրանստան: Այժմ պէտք է սպասել, որ հայկական խնդրին վերջապէս ընթացք կը արվի, և կը վերջանա, յամենայն դէպս, Թիւրքացի մեր հաւան քրիստոնեայ ազգաբնակչութեան համար բարեկամող մտքով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 24 մայիսի

Ամենքի բերանից լսվում են դանդաղներ, թէ միջանում կրօնի դատաւորութիւնը թոյլ է, թէ աշակերտները կամ աշակերտութիւնը ոչինչ չը դիտեն և թէ ուսուցիչները ոչինչ չեն ուսուցանում... Բայց այդ պարանները դանդաղելով հետամուտ եղած չեն և չեն լինում զորա իսկական պատճառները դանդաղ և դանդաղ անկող: Պատճառները շատ պարզ են և ես կը բերեմ այստեղ: Դրա պատճառներն այն են, որ միջանում ամենայն հոգեւորական, ինչէր նա պատարաստված, թէ անպատրաստ, լինելը ընդունակ, թէ անընդունակ, դրանի վարուց տեղ, թէ վատաբարոյ, կարող է կրօնասոյց դառնալ և այդ պաշտօնը խաթրելու կամ այլ միջոցներով ձեռք բերելով վարում է, ինչպէս ինքն կամենում է և ուշադրութիւն դարձնող չը կայ, գործ է կատարում արդիւնք նա, թէ ի դուր եղումուտ անկող ամսական առձեռներն է ստանում: Այսպէս լինելուց յետոյ, ինչ կարծիք կայ, որ աշակերտները և աշակերտութիւնը ոչինչ չեն գիտնայ:

Այժմ պատմեմ մի ուրախալի լուր: Թեմին նորին ուսաւորող ազգային և տեղութեան ուսումնարաններում կրօնի հարցաքննութեանցը ներկայ գտնվելով ուշադրութիւն է դարձրել և, ինչպէս պատմում են, շուտով կառաւարկվի առաջնորդական յանձնարարովի մէջ մշակելու հայ-կրօնասոյցների հարցը: Հարկաւոր էր, որ լրագրութիւնն էլ իր կողմից մշակել այդ հարցը և ամենայն ոգ յայտնել իր հայեացքները դրա մասին, որով մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին յանձնարարովին և նպաստած հարցի բարեւոր մշակմանը և որոշմանը:

Ես իմ կողմից այդ հարցի վերաբերութեամբ դարձնում եմ յանձնարարովի խորին ուշադրութիւնը հետեւեալ կետերի վրա:

Նախ պէտք է ընտրել և որոշել կրօնի դատաւորական համար կրօն ուսուցիչներ, որոնք փոքր ի շատե պատրաստված լինեն այդ վսեմ

պաշտօնի համար, որոնք անձնութեամբ վերաբերվեն դէպի այդ առարկան և իրանց գովանել վարք ու բարքով վայելէին հասարակութեան յարգանքը:

Եւրոպացի պէտք է կազմել ուսումնարաններ, տեղին ու հանգամանքներին նայած, ծրագրեր, խօսքս դիւաւորապէս տեղութեան ուսումնարանների մասին է, և ոչ թողնել, ով ինչ կամենայ և ինչ ձեռով ուղենայ, պարսպաւ և կազմած ծրագրերն յանձնելով կրօնասոյցներին պարտաւորել անցնելու, իսկ տարվայ վերջը նշանակի առանձին քննիչներ վերատուգելու համար, թէ կարողացել են արդիւր իրանց ստանձնեալ պաշտօնը կատարել:

Եւրոպացի մեր հոգեւորականների պատրաստված լինելու կողմից ներկայ վիճակը ի նկատի առնելով հարկաւոր է մեր կրօնասոյցներին պարսպաւ և միջանկաւ օրական դասերը պատրաստել և նոյա վերաբերեալ կրօնական գրքեր կարդալ: Սորա համար նորա պէտք է ազատ լինեն ծովան հովուութեւ, որովհետեւ ծիսոյ հովուութիւնը կարող է արդիւր լինել դասերի կանոնաւոր շարունակութեան և պարսպաւ ժամանակները խել:

Եւ չորս օր ամենայն տեղ կրօնասոյցները անմիջապէս պէտք է նշանակվեն տեղական հոգեւոր իշխանութեան հաւանութեամբ:

Առանձին հետաւորական կարելի է իրագործել բաւական է ստույգ տեղեկութիւններ ժողովել թէ որքան ուսումնարաններ կան, կրօնի համար որքան դասեր են որոշված և որքան են վճարվում: Այդ գումարը մասնադրել այնքան կրօնասոյցներ ի վրա, որ իւրաքանչիւր ստանայ տարեկան առ նուազ 1,200 ռուբլի: Այսպիսով թէ ժողովրդեան միջի տրտունջը կը վերանայ և թէ աշակերտները և աշակերտութիւնը ուսած կը լինեն իրանց կրօնը:

Դպրի

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Ինչպէս մեզ հաղորդում են ՎԱԿԱՐՇԱՊԱՏԻՑ, այդտեղ Նոյա Մեծութիւնների թաղաքութեան առիթով երեք օր շարունակ փառաւոր տօնախմբութիւնների կատարվեցան թէ Ս. Եւսիմիայի միաբանութեան և հասարակութեան և թէ ծառայողների կողմից:

Շնորհակալութեամբ ստացանք Մոսկվայից, պ. Ս. Գովանիստանից ուսուցիչ լեզուով նրա թարգմանած «Օրբելեան իշխանների պատմութիւնը» թարգմանչի ծանօնութիւններով և բացատրութիւններով: Գրքի վերնագիրն այս է. «Исторія князей Орбелянъ» Գիրքը տպված է Մոսկվայում:

Այս օրերս վախճանվեցաւ Թիֆլիսում, մեր հասարակութեանը յայտնի երգչուհի, տիկին Գէկեր-Շէնկ: Հանգուցեալը, ասում են, 54 տարեկան էր:

Մի երկտասարդ խնդրում է մեզ տպել հետեւեալ յայտարարութիւնը: «Յանկանում եմ ամառս, յունիսի 1-ից, դասեր տալ: Հասցէս. Частное реальное училище Мелик-Бегларова, учителю А. Н. Дастакову.»

Այս ամառը շատ փոփոխական է թիֆլիսում: Մի օր շատ շոգ է անում, մի օր հով, մի օր սառն: Իսկ քամի է փչում, կամ յորդ անձրեւ է գալիս, իսկ մի քանի օր տառջ այնպիսի կարկուտ էր եկել, որ կոտորեւ է տները այն բոլոր պատուհանների ապակիները, որոնք դէպի հիւսիս են նայում: Կարկուտի հատիկները աղանի ձուր մեծութեան էին:

«Մշակի» խմբագրութիւնը ստացել է վարչապալից այլ և այլ կլիշէն և, այնպէս որ այժմ մեր լրագրում յայտարարութիւններ տպել տուողը, կարող է իր ուղած պատկերներով տպել տալ յայտարարութիւնը:

Ս. ՊԵՏՏՐՈՎՈՒԹՅԱՆ, 29 մայիսին՝ Այսօր քաղաքում
վերջնականապես տօնալսյն տեսք ստացան, առկա
չըլի դարդարվելով քան թէ իմագաղաթեան օրը
հանդիս վրա մեծ քանակով լինելով դրօշակներ կանոն
հանդիսները ծածկված են դրօշակով կամ կարմիր
մահուդով։ Նիկոսիկ ամբողջ փողոցը զարդար
է դրօշակներով, իւրաքանչիւր լապտերի սինալ
վրա երեք դրօշակ կալ։ Առանձին է Գինլառով զար
դարված են Նիկոլաւսիկ կայարանը, Պրոտոստոլի
և Գալանտալիովի տները, Պալկինի Նիւստոնը, կոնստ
Ստրօգանովի տունը։ Բոլորս Սօրակայա ընդ
Թող է Նիկոսիկուց։ Մինչև անգամ քաղաքի ծայր
բում բարձրաթիւ տներ և ամրաբանոցներ զարդար

Типогр. Главн. Упр. Главннач. гражд. час., Мор.-Мелик. ул. кав. д.